




## ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ



Թե քանի քիմիական տարր (կամ ատոմների քանի տեսակ) գոյություն ունի բնության մեջ, ոչ ոքի հայտնի չէ: Հարյուրամյակների ընթացքում գիտնականները հայտնաբերել են ատոմի նորանոր տեսակներ: Մի շարք ատոմներ մարդիկ սրացել են արհեստականորեն՝ հայրուկ քիմիական ռեակցիաների օգնությամբ: Ինչպես գիտեք, այսօր հայտնի է 118 քիմիական տարր: Այդ տարրերից վերջինը՝ 118-րդը հայտնաբերել է Դուբնա քաղաքի միջուկային հետազոտությունների միացյալ

ինստիտուտի պրոֆեսոր, հայազգի ֆիզիկոս Յուրի Հովհաննիսյանը: Քիմիական տարրը կոչվում է նրա անունով՝ **Օգանեսոն**: Այժմ Յուրի Հովհաննիսյանն իր գործընկերների հետ փորձում է գրել հերթական՝ 119-րդ և 120-րդ քիմիական տարրերը: Կհաջողվի՞ սինթեզել նոր ատոմներ՝ ոչ ոքի նախապես հայտնի չէ: Շատ բան կախված է գիտնականների գիրելիքների պաշարից, համառ աշխատանքից ու հնարագիտությունից: